


Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ

Պետրոս եւ Աղօթքի ուժը



Written by: Edward Hughes

Illustrated by: Janie Forest

Adapted by: Ruth Klassen

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian
dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

www.M1914.org

©2013 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.



Պետրոս առաքեալ
ճամբորդեց
ամբողջ
քաղաքին կողմերը
քարոզելով
Յիսուսի
մասին:



Օր մը Լիտիա
Կոչուած
քաղաքին մէջ
ան հանդիպեցաւ
մարդու մը, ...





... որ անկողին
լքուած էր,
անդամալուծուած,
ուրթը տարիներէ
ի վեր:





"Յիսուս Բրիտոս
կը բուժէ քեզի",
ըսաւ Պետրոս,
"ոտքի ել եւ
անկողինդ
շտկէ": Մարդը
անմիջապէս
ոտքի


եւաւ:




Ժողովուրդը
այս տեսնելով
դարձաւ
Տիրոջ:




Մտակայ Յոպպէ
քաղաքին մէջ
ժողովուրդը
տխուր էր:




Քրիստոնեայ տիկին
մը, որ Տաբիթա կը
կոչուէր մեռած էր:




Տխրութեամբ իր
բարեկամուհիները
անոր թաղման կը
պատրաստէին, ...



... եւ անոր վերի
սենեակը հանեցին,
որպէսզի բոլորը
մէկ լան անոր վրայ:




Բայց
Տաբիթայի
բարեկամուհին
երը լսեր էին, որ
Պետրոս իրենց
շրջանին մեջն է:



Անոնք
Պետրոսը
կանչեցին, որ
անմիջապես
Յոպպե գայ:




Երբ ան
վերի սենեակը
բարձրացաւ, ...




... այրիները անոր
ցոյց տուին
Տաբիթայի
կարած
հագուստները
իրենց համար:
Ամեն ոք կու լար:



Սակայն
Պետրոս ամենքը
դուրս հանեց,
ծունկի եկաւ եւ
աղօթեց եւ
դառնալով
մարմնին
ան ըսաւ.



"Տաբիթա,
ոտքի ել", եւ
ան աչքերը բացաւ
եւ երբ Պետրոսին
տեսաւ նստաւ:





Յետոյ անոր
ձեռքէն բռնելով
բարձրացուց, եւ
երբ ան կանչեց
սուրբերը
(քրիստոնեաները)
եւ այրիները, ...





... անոր
ողջ առողջ
ներկայացուց
ել այդ լուրը
տարածուեցաւ
ամբողջ
Յոպպէի մէջ եւ
շատեր Տիրոջ
հաւատացին:




Պետրոս երկար ժամանակ
Յոպպեի մնաց,

ծովուն մօտ

տան
մը
մեջ:



Օր մը Պետրոս տան տանիքը
ելաւ, որ աղօթէ, ...




... քիչ մը հեռուն քաղաքի
պատերուն վրայեն եթե

նայեր ան պիտի
տեսներ, ...





... որ երեք ճամբորդներ կու
գան զինք տեսնելու:




Այս մարդիկը հռոմեացի
զինուորի մը ծառաներն էին, ...



... որ Կոռնելիոս կը կոչուեր եւ
Սատուծոյ կը
պաշտեր:




Կոռնելիոս զրկեց իր ծառաները,
որ գտնեն Պետրոսը, որովհետեւ
հրեշտակ




մը
իրեն
տեսիլք
մը ցոյց
տուած էր, ...




... "Պետրոս գտիր: Ան Սիմոնի
հետ է, անոր տունը ծովուն
մօտն էր:



Ան
գիտէ
կ'ըսէ,
ինչպէս
պետք է որ
ընես":



Երբ Պետրոս կ'աղաչեր տան
տանիքին վրայ, Աստուած անոր
տեսիլք մը ղրկեց:



Կարծես երկար կտոր մը կ'երկարի
մինչեւ երկիր: Այդ կտորին վրայ
կային անասուններ
եւ թռչուններ:




Պետրոս կրնար գիտնալ, թէ ասոնք
"մաքուր չեն": Այդ կը նշանակէր, որ
հաւատացեալ
հրեաներուն

արգիլուած
էր ուտելու
անոնցմէ:



Յանկարծ, ձայն մը եկաւ իրեն:

"Կանգնիր, Պետրոս,
մեռցուր եւ կեր":



"Ո՛չ այդպես, Տէր",
պատասխանեց
Պետրոս Աստուծոյ:
"Որովհետեւ
ես չեմ կերած
հասարակ եւ
անմաքուր
բան":





Ձայն մը խօսեցաւ
իրեն երկրորդ
անգամ: "Ինչ
որ Աստուած
մաքրած է
պէտք չէ կոչես
հասարակ":




Այս երեք անգամ
կրկնուեցաւ:
Յետոյ կտորը
նորէն երկինք
քաշուեցաւ:





Պետրոսը չէր հասկնար
ինչ էր իմաստը այդ
տեսիլքին:





Մտածած ատեն Աստուած
ըսաւ անոր որ երեք մարդիկ
իրեն կը փնտռեն
եւ անոնց հետ
պետք է երթայ:





Երբ երեք մարդիկը ըսին
Պետրոսի սուրբ հրեշտակին
Թելադրածը
Կոռնելիոսի, ...



... որ իրեն կանչե, Պետրոս
գիտցաւ, որ Աստուած
իրեն կ'առաջնորդէ:



Յաջորդ օրը, ինքը եւ վեց
ընկերներ գացին
Կոռնելիոսի
տունը:





Թերեւս, երբ
ան կ'երթար ոչ
հրեայի մը տունը,
Պետրոս սկսաւ
հասկնալ, ...





... թե Աստուած կը սիրէ
բոլոր ժողովուրդները
եւ թե Աստուած կ'ուզէ
բոլոր պետութիւնները
ճանչնան Յիսուսը, որ
աշխարհի Փրկիչն է:
Երբ Պետրոս հասաւ
Կռռնելիոս առջեւը
իսկաւ պաշտելու
զայն:



"Ոտքի ելիր: Ես ինքս ալ մարդ եմ",
ըսաւ Պետրոս Կոռնելիոսին:



Յետոյ Պետրոս տունը գտնուող
բոլոր մարդոց ըսաւ.



"Դուք գիտեք, թե ինչքան օրենքի դեմ է, որ հրեայ մը ընկերակցի ուրիշ երկրի մարդոց հետ":



"Բայց Աստուած ինձի ցոյց տուաւ,
որ որեւէ մէկու մը հասարակ կամ
անմաքուր կանչեմ":



Պետրոս ըսաւ այս հեթանոսներու
(ոչ-հրեաներուն), որ Յիսուս ինքն է
Աստուծոյ Որդին, որ մահացաւ
խաչին վրայ եւ համբարձաւ, ...



... որպեսզի Ան ըլլայ Փրկիչը
ամբողջ աշխարհի:



Յետոյ Սուրբ Հոգին իջաւ անոնց վրայ եւ անոնք սկսան փառք տալ Աստուծոյ: Պետրոսին վեց հրեայ ընկերները ապշած էին:



Այս, կարծես հոգեգալուստ էր:
Սուրբ Յոզիին նուերը կը թափեր
Կոռնելիոսին եւ ներկաներուն
վրայ ալ:



Յետոյ Պետրոս Յիսուսով մկրտեց
նոր հաւատացեալները:



Երուսաղեմի մեջ քրիստոնեաները,
մեղադրեցին Պետրոսին
հեթանոսներուն այցելելուն
պատճառով:



Ուրեմն Պետրոս ըսաւ անոնց իր եւ
Կռնելիոսի տեսիլքին մասին, որ
աղօթքով ստացաւ:



Երբ այս բաները լսեցին,
Երուսաղեմի քրիստոնեաները լուռ
մնացին եւ անոնք փառք տուին
Աստուծոյ, Ան աղօթքով ցոյց տուաւ
քրիստոնեայ եկեղեցոյ,
որ Աստուծոյ
սերը ամենուն
է:



Պետրոս եւ Աղօթքի ուժը

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Գործք Առաքելոց 9 - 12

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Մաղմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:



Եթէ կ'ուզես մեղքերէդ ազատիլ, հետեւեալը
ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը
հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի
համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի:
Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես
բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր
կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ,
յաւիտեան: Օգնէ ինծի որպէսզի քեզի
համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն
օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

